


Գևորգ Գրիգորյան. Տրտմաթախիծ գույների քնարերգուն



«Հազարամյա խավարից հետո նա լուս բերեց նկարչություն», - կերպարվեստում իտալական Վերածննդի նախահայր համարվող Ջոտտոն դի Բոնոնեի (1266-1337) մասին ասել է Բոկկաչչոն: Այդ լուսաբեր խորհուրդը կա նաև հայկական Ջոտտոյի՝ գեղանկարիչ Գևորգ Գրիգորյանի (1897-1976) ստեղծագործության մեջ: Ենշտ է, ի հակառակ իր իտալացի անվանակցի պայծառ, բայց և սառը գույների՝ մուգ ու թանձր է հայ նկարչի գունապնակը: Ընդհանուր են, սակայն, նրանց ստեղծագործությունների անկեղծությունն ու պարզությունը, մարդու հանդեպ երկուսի տաճած աներեր հավատը և գեղարվեստական զուսպ արտահայտչամիջոցների օգտագործումը:

Տարբեր վարկածներ կան Գևորգ Գրիգորյանի՝ Ջոտտո անունը ստանալու վերաբերյալ: Պարզ է մի բան, որ առանց այդ արվեստագետի անհնար է լիարժեք պատկերացնել 20-րդ դարի հայ կերպարվեստի պատմությունը: Ծնված լինելով Անդրկովկասի մշակութային մայրաքաղաք հանդիսացող Թիֆլիս քաղաքում՝ նա զգալի դեր խաղաց, այսպես կոչված, «Թիֆլիսյան դպրոցի» կազմավորման գործում:

Անուրախ մանկություն, դժվար կյանք և նույնպիսի ծերություն է ունեցել Գևորգ Գրիգորյանը: Աշակերտ է եղել «խազեինների» մոտ, նկարել դուքանների պատերին (հետագայում այս ամենը հիշողությամբ պիտի պատկերեր թիֆլիսյան կոլորիտով շնչող «Ին կյանքը» նկարաշարում): Գտնվել են բարի մարդիկ, ովքեր նկատելով օժտված պատանու շնորհքը՝ օգնել են նրան ստանալ գեղարվեստական կրթություն:

Գեղագիտական հնչեղությամբ և կատարման ոճով միմյանցից անշափ տարբեր են 20-30-ական թվականների և հետագա, ավելի ուշ շրջանի աշխատանքները: Առաջինները դասական արվեստի ոգով արված գործեր են, նկարչի տաղանդի և հասունության իսկական վկայագրեր: Յիշատակենք անգերազանցելի վարպետությամբ արված «Արտավազդի դիմանկարը», «Չարենցի դիմանկարը»՝ նկարված 1926-ին: Ընդհանրապես նրա բոլոր դիմանկարները («Միսաք Մեծարենց», «Վան Խոջաբեկյան», «Վահան Տերյան», «Փիրոսմանի», «Բալզակ» և այլն) հատկորոշվում են ոչ միայն բնորդի հետ արտաքին



նմանությամբ, այլև հոգեբանական ապրումների նուրբ փոխանցմամբ ու ներքին դրամատիզմով:

Զոտոտ-Գրիգորյանի նախասիրած նկարչական ժանրը նատյուրմորտն է եղել: Նրա այդ գործերում հաղթահարված է քարացածությունը, որ ենթադրաբար պարտադիր է այդ ժանրին պատկանող աշխատանքների համար: Ավելին՝ նրա նատյուրմորտներում պատկերված իրերը՝ բաժակներ, սկահակներ, շշեր, շնորհիվ իրենց դասավորության և եզրագծերի շեշտվածության, կարծեք շարժման մեջ լինեն:

1962-ին 65-ամյա նկարիչն ընտանիքով տեղափոխվում է Երևան, որի շնորհիվ հայրենասիրական ու զգացական նոր լիցը է ստանում նրա ներկապնակը: Դա երևում է հատկապես Կոմիտասի կյանքի տարբեր դրվագները պատկերող նկարներում, որոնց նայելիս սարսուռ է անցնում մարմնովդ: Աննկարագրելի ներգործության ուժ ունեն դրանք և մեր ժողովրդի թե՛ անցյալի, թե՛ ներկա տխուր ճակատագրի թանձրացած արտահայտություններ են:



Բարեբախտաբար, հայկական Զոտոտոյի այս ու մյուս գործերն այսօր մեկտեղված և մեծ խնամքով ցուցադրվում են Մաշտոցի պողոտայի թիվ 54 շենքի առաջին երկու հարկաբաժինները զբաղեցնող արվեստանոց-թանգարանում, որը բացվել է նկարչի մահից անմիջապես հետո այրու՝ Դիանա Ուկլեբայի և մի խունք արվեստագետների նախաձեռնությամբ: Դրա լուր ու հանդիսավոր սրահներում կարելի է տեսնել նրա՝ մեկը մյուսից ավելի խոր ու խորիրդավոր գործերը և թերևս ամենահայտնի աշխատանքը՝ 1928-ին վրձնած «Ուերպիեմ»ը, որի և՛ թեման, և՛ կատարման ոճը զարգացված են հետագա շրջանի նկարներում:

Լինելով Զոտոտոյի թանգարանում՝ ակամա մտաբերեցի երեսնամյա վաղեմության առաջին այցս արվեստի այդ օջախ, երբ մուտքի մոտ մեզ դիմավորեց նկարչի 80-ամյա կինը: Դիանա Նեստորովնան մանրամասն պատմեց ամուսնու վրձնած կտավների մասին՝ մեկ առ մեկ նկարագրելով՝ դրանց ստեղծման պատմությունը: Պարզվում է՝ այն մղձավանշային 37 թվին շատ նկարներ է ոչնչացրել հեղինակը, և միայն կնոջ անձնվեր ջանքերի շնորհիվ են փրկվել դրանցից շատերը: Ահա, օրինակ, որմնանկարի այն սքանչելի նախանկարը, որ բուժած իր վերքերը՝ այսօր պահպում է ապակու տակ: Թե չլիներ վրացուիի այդ կնոջ անմնացորդ սերն ու երկյուղածության հասնող վերաբերմունքն իր արվեստագետ ամուսնուն և նրա արած գործին, երկի մենք այսօր չունենայինք այս ամբողջ հարստությունը: Դայ նկարչի անհաշիվ հիվանդ օրերի պահապան հրեշտակն է եղել Դիանան, որին նա «փոխադարձել ե»՝ ստեղծելով ազնվության և նվիրվածության ընդգծված դրոշմը կրող դիմանկարների մի շարք:

Զավակներ չեն ունեցել նրանք. այդպիսիք նրանց համար եղել են իրենց նկարները: Երևի դա է պատճառներից մեկն այն սակավ հանդիպող երևույթի, երբ ողջ կյանքում ոչ մի նկար չեն վաճառել: Ապրել են դժվարությամբ, բայց չեն կամեցել բաժանվել իրենց հոգեզավակներից: Դրանցում գերիշխողը լուսավոր թախծի տրամադրությունն է, որ անմիջապես համակում է դիտողին: Ով մեկ անգամ տեսել է Զոտուոյի նկարները, երբեք չի մոռանա դրանք:

... Այն ժամանակ անվերջ պատմում էր Զոտուոյի այրին, պատմում առանց հոգնության: Ուշագրավն այն էր, որ յուրաքանչյուր բարից հորդում էր սերն ու նվիրումն առ իր արժանահիշատակ ամուսինը: Արվեստի (հայ թե համաշխարհային) պատմության մեջ շատ չեն դեպքերը, երբ մեկն սկսել է լրջորեն զբաղվել արվեստի միաժամանակ երկու տեսակներով արդեն առաջացած տարիքում և նկատելի հաջողությունների հասել երկու ասպարեզներում էլ: Նկարիչ ամուսնու մահից հետո միայն, երբ Դիանան արդեն 68 տարեկան էր, վրձին առավ ձեռքը և վերիիշելով տասնամյակներ առաջ իր ստացած կրթությունը՝ սկսեց նկարել: Նկարում էր բնությունը, ամուսնուն: «Վերջին հայացքը» նկարում, ստեղծված ամուսնու մահից հինգ տարի անց, նա Զոտուոյին պատկերել է հիշողությամբ: Այս և Դիանա Ուկլեբայի մի քանի այլ կտավներ ցուցադրվում են թանգարանի առանձին սրահներից մեկում: Նայում ես այդ գործերը, կարդում «Մեր սերը՝ անմար կանթեղ» վերնագրով նրա հեղինակած ժողովածուի բանաստեղծությունները և խոնարհվում այդ մեջ սիրո առաջ: Դրանցում բանաստեղծ նկարչուիին պատմում է «լռություն հագած» իր մենության, «անձայն հեռացած» ամուսնու հանդեպ տածած անթաքույց սիրո վերհուշների մասին:



Զգիտես ինչու իսկական սիրո ու հավատարմության օրինակները մենք պեղում ենք դարերի խորքում և համաշխարհային արվեստի տարեգրության մեջ: Մինչդեռ մեր օրերում և մեր կողքին էլ են հյուսվել նման պատմություններ: Անձնական-ստեղծագործական նման ներդաշնակության մասին կա արդեն վավերագրական կինոնկար, գրվել են նաև առանձին էջեր, բայց թվում է, թե անօրինակ այս սիրո պատմագիրը դեռ պիտի գա: